

Հ ա ս տ ա տ վ ա ծ Է
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի
ազգային համալսարանի Հոգաբարձուների խորհրդի
2014թ. դեկտեմբերի 24-ի նիստում

*Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարություն*

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային
համալսարան*

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(Պլան)

2015-2020 թթ.



ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Ներածություն -----	3
2.	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի առաքելությունը-----	5
3.	Համալսարանի զարգացման հիմնական նպատակները, խնդիրները և դրանց իրականացման ուղղությունները -----	6
3.1.	<i>Նպատակ 1: Համալսարանի մասնագիտություններով ընդունելության բնականոն կազմակերպման նպատակով որակյալ գիտելիքներով դիմորդների նախապատրաստում -----</i>	6
3.2.	<i>Նպատակ 2: Բոլոնիայի գործընթացի զարգացումներին համահունչ բարձրորակ, արդիական կրթության ապահովում -----</i>	11
3.3.	<i>Նպատակ 3: Համալսարանի կադրային քաղաքականության կատարելագործում և գիտամանկավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստման արդյունավետության բարձրացում -----</i>	15
3.4.	<i>Նպատակ 4: Ուսումնագիտական լաբորատորիաների և լսարանների արդիականացում, նորերի ստեղծում, նյութատեխնիկական բազայի համալրում, ենթակառուցվածքների զարգացում -----</i>	20
3.5.	<i>Նպատակ 5: Համալսարանի գիտական և ստեղծագործական ներուժի օգտագործում հետազոտական, խորհրդատվական, նախագծային աշխատանքներում՝ միտված երկրի տնտեսական, մշակութային և սոցիալական խնդիրների լուծմանը -----</i>	22
3.6.	<i>Նպատակ 6: Միջազգային կապերի կայուն զարգացում՝ ուսումնական և գիտատեխնիկական համագործակցության ուղղություններով, համալսարանի վկայագրի՝ արտերկրում ճանաչման գործընթացի շարունակական ապահովում-----</i>	27
3.7.	<i>Նպատակ 7: Համալսարանի կառավարման գործընթացում ուսանողների ներգրավման գործունե կառուցակարգերի ներդրում և կատարելագործում ---</i>	29
3.8.	<i>Նպատակ 8: Համալսարանի գործունեության արդյունքների հաշվետվողականության ապահովում -----</i>	32
3.9.	<i>Նպատակ 9 Ծինանսատնտեսական գործունեության կայունություն-----</i>	34

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում կրթության և գիտության զարգացումն ու գիտատեխնիկական առաջընթացը ռազմավարական խնդիրներ են: Այդ համատեքստում պետական ու ազգային կարևորագույն խնդիրներից մեկը բարձրագույն և հետբուհական կրթության այնպիսի համակարգի ձևավորումն է, որի արդյունքում կպատրաստվեն գիտելիքահենք, ժամանակակից հասարակության և տնտեսության պահանջներին համապատասխանող, մրցունակ բարձրորակ կրթությամբ մասնագետներ:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (այսուհետև՝ Համալսարան) կոչված է թողարկելու որակյալ կադրեր՝ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված մասնագիտությունների գծով, նպաստելու Հայաստանում հազարամյա ավանդույթներ ունեցող հայկական ճարտարապետական և շինարարական դպրոցի պահպանմանն ու զարգացմանը: Իր ուղղվածությամբ, առ օրս, այն ճարտարապետության և շինարարության ոլորտի կրթության և գիտության ոլորտի Հայաստանի միակ համալիր կենտրոնն է:

Համալսարանում գործում են հմ. 029-«Ճարտարապետություն» և հմ. 030-«Շինարարություն»՝ դոկտորական և թեկնածուական գիտական ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհուրդները: Մասնագիտական խորհուրդների գործունեության շնորհիվ ստեղծվել է գիտական մթնոլորտ՝ հետազոտությունների կատարման և ատենախոսությունների պաշտպանության համար, ինչն ապահովում է բարձրորակ գիտամանկավարժական կադրերի վերարտադրումը:

2008թ. մարտից Համալսարանի կազմում գործում է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի միջին մասնագիտական կրթության քոլեջը (համաձայն ՀՀ կառավարության 29.11.2007 հմ. 1577Ն որոշման), որը միջին մասնագիտական կրթության ծրագրեր իրականացնող, պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կադրեր պատրաստող ստորաբաժանում է:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը 1958 թվականից ճարտարապետության, շինարարության և գեոդեզիայի մասնագիտություններով կադրեր է պատրաստել և պատրաս-

տում արտասահմանյան երկրների համար, մասնավորապես Ֆրանսիայի, Շվեդիայի, Ռուսաստանի, Վրաստանի, Լիբանանի, Սիրիայի, Իրաքի, Իրանի, Հորդանանի, Հնդկաստանի, Բուլղարիայի, Կիպրոսի, Եգիպտոսի, Եթովպիայի, Արգենտինայի, Վիետնամի, Լատսի, Կամբոջայի, Կանադայի, Ալժիրի, Թուրքիայի, ներկայիս ԱՊՀ երկրների և այլն: Համալսարանն իր առաջին արտասահմանցի շրջանավարտները տվել է 1963 թվականին: Բազմաթիվ արտասահմանցիներ եղել են համալսարանի ասպիրանտներ, ստաժորներ, դոկտորանտներ, պաշտպանել են թեկնածուական դոկտորական ատենախոսություններ: Համալսարանի մի շարք դասախոսներ տարբեր ժամկետներով աշխատանքի են գործուղվել արտասահմանյան երկրներ, առանձնապես ֆրանկոֆոն:

Ներկայումս գործողության մեջ են աշխարհի 15 երկրի 30-ից ավելի բուհերի հետ կնքված համագործակցության պայմանագրերն և համաձայնագրերը: Համալսարանն անդամակցում է ԱՊՀ երկրների 174 Շինարարական բուհերի միջազգային ասոցիացիայի և Ճարտարապետական կրթության աջակցման տարածաշրջանային հասարակական կազմակերպությանը:

Միջազգային և հանրապետական մրցույթներում և ստուգատեսներում համալսարանի գիտնականները բազմիցս արժանացել են մրցանակների, իսկ նրանց կողմից ղեկավարված շրջանավարտների ավարտական աշխատանքները՝ ամենաբարձր մրցանակային տեղերի:

Համալսարանի ճարտարապետի որակավորման դիպլոմը ճանաչվում է Ֆրանսիայի կառավարության կողմից և ընդունվում համարժեք Եվրահամայնքի երկրների ճարտարապետի որակավորման դիպլոմին:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի առաքելությունը

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի առաքելությունն է ճարտարապետության, շինարարության քաղաքային տնտեսության, դիզայնի, տեղեկատվական համակարգերի և հարակից ոլորտներում միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին բավարարող եռաստիճան կրթական համակարգով մասնագիտական կադրերի պատրաստումը, շարունակական կրթության ապահովումը, գիտահետազոտական աշխատանքների իրականացումը և ծառայությունների մատուցումը:

ՃՀՀԱՀ-ն իրականացնում է իր առաքելությունը՝ համաձայն Ռազմավարական ծրագրի նպատակների, որոնք ներառում են համալսարանի ողջ գործունեության արդյունավետ իրականացումը բոլոր բնագավառներում՝ ապահովելով Համալսարանին կայուն առաջընթաց:

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ,
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ն Պ Ա Տ Ա Կ 1

**Համալսարանի մասնագիտություններով ընդունելության
բնականոն կազմակերպման նպատակով որակյալ գիտելիքներով
դիմորդների նախապատրաստում**

Կրթություն ստանալը մարդու հիմնարար իրավունքներից է: Անհատների և հասարակության համար բարձրագույն կրթությունը բացառիկ մշակութային ու գիտական հարստություն է: Եվրոպական տարածաշրջանում գոյություն ունեցող կրթական համակարգն արտացոլում է դրա մշակութային, սոցիալական, քաղաքական և տնտեսական բազմազանությունը՝ նպատակ ունենալով տարածաշրջանի բոլոր մարդկանց հնարավորություն ընձեռել լիարժեքորեն օգտվելու այդ բազմազանությունից: Կարևոր է դյուրացնել յուրաքանչյուր երկրի ուսումնական հաստատությունների մուտքը դեպի այդ համակարգ:

Անհրաժեշտ է ապահովել եվրոպական տարածաշրջանի որևիցե երկրում ստացած ուսումնական վկայականների, վկայագրերի և գիտական աստիճանների ճանաչումը մյուսների կողմից, ինչը կխթանի կողմերի միջև ակադեմիական շարժունակությանը:

Համալսարանը պարտավոր է ապահովել.

- որակյալ ուսուցում,
- բարձրորակ գիտահետազոտական աշխատանք,
- միջազգային ճանաչում և հեղինակություն,
- սերտ կապեր հասարակության հետ,
- հիմնական կրթության և հետազոտությունների միասնության, կրթական մեթոդների բազմակողմանիություն և ազատականացում:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով:

«Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության ներկա օրենքը բավարար համարելով հանդերձ՝ անհրաժեշտ է համապատասխան իրավական ակտերը (լիցենզավորման, հավատարմագրման, որակի և վերահսկողության վերաբերյալ) հստակեցնել և լրամշակել այնպես, որպեսզի ապահովվի Համալսարանի շրջանավարտների դերը կառուցվածքների հետազոտման, նախագծման, կառուցման, պահպանման, շահագործման և ապամոնտաժման գործընթացներում: Այս ամենը մի կողմից հնարավորություն կստեղծի ոչ միայն հրապուրիչ դարձնել որակյալ ճարտարապետի և շինարարի մասնագիտություն ստանալը, այլև կխթանի արտոնագրման համակարգի լիակատար վերականգնմանը, կամրագրի բնագավառում աշխատելու համար մասնագիտական համապատասխան որակավորման առկայության պարտադիր լինելը (ինչը կկարևորի ենթակառուցվածքների՝ ճանապարհների, գազամուղների, ջրատարների, ջրամբարների, կամուրջների, թունելների, արտադրական, բնակելի, հասարակական, մշակութային կառույցների, շենքերի ու շինությունների հետազոտման, նախագծման, կառուցման, շահագործման և պահպանության, կոնսերվացման, ապամոնտաժման բոլոր փուլերի ընթացքում համալսարանի շրջանավարտների դերը):

Հետազոտման, նախագծման, կառուցման, շահագործման և պահպանության, կոնսերվացման ապամոնտաժման ողջ շղթայում պետք է հստակ գործեն հսկողության ու վերահսկողության կառուցակարգերը, դրանց սահմանման և իրականացման իրավունքներն ու պարտականությունները նույնպես պետք է կատարվեն համալսարանում համապատասխան որակավորում և պարբերաբար վերապատրաստում անցնող մասնագետների կողմից:

ԽՆԴԻՐ 1.1: Համալսարանի ընդունելության պլանավորում, մասնագիտական կողմնորոշում

Միջոցառումներ.

Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ

- վերլուծել աշխատաշուկայի պահանջները, յուրաքանչյուր տարի
- իրականացնել մասնագիտական կողմնորոշման բազմակողմանի գովազդային գործընթաց, յուրաքանչյուր տարի
- կապեր հաստատել ՀՀ ավագ դպրոցների ավարտական դասարանների աշակերտների հետ՝ իրականացնելով մասնագիտական կողմնորոշում, յուրաքանչյուր տարի
- միջոցներ ձեռնարկել դեպի Համալսարան մուտքի ազատականացման և տարբեր աստիճաններում մուտքերի բազմազան հնարավորությունների համար, 2015 2020
- կազմակերպել նախապատրաստական դասընթացներ, յուրաքանչյուր տարի
- հրատարակել դիմորդներին կողմնորոշող ուղեցույցներ: յուրաքանչյուր տարի

ԽՆԴԻՐ 1.2: Համալսարանի կազմում կամ նրան կից մասնագիտական կողմնորոշմամբ ավագ դպրոցների կամ դասարանների կազմավորում

Միջոցառումներ.

Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ

- Համալսարանի կազմում ստեղծել ավագ դպրոցների ցանց, 2015 2020
- ՀՀ մարզերի ավագ դպրոցներում ստեղծել մասնագիտական կողմնորոշման դասարաններ, 2015 2020
- մասնագիտական ավագ դպրոցներում կամ դասարաններում մասնագիտական առարկաների ուսուցումը կազմակերպել Համալսարանի դասախոսների ուժերով, յուրաքանչյուր տարի
- ֆինանսական, նյութատեխնիկական օժանդակություն ցուցաբերել գործընկեր դպրոցներին կամ դասարաններին: յուրաքանչյուր տարի

ԽՆԴԻՐ 1.3: Օտարերկրյա դիմորդների հոսքի ապահովման իրականացում

Միջոցառումներ.

***Իրականացման
ժամանակացույց
սկիզբ ավարտ***

- ՀՀ սահմաններից դուրս իրականացնել ակտիվ գովազդարշավ,	յուրաքանչյուր տարի	
- համագործակցել արտերկրներում ՀՀ դեսպանատների ու հյուպատոսարանների հետ,	յուրաքանչյուր տարի	
- անհրաժեշտության դեպքում արտերկրներում բացել Համալսարանի ներկայացուցչություններ,	2015	2020
- մշակել և իրականացնել առցանց ուսուցման ծրագրեր,	2015	2020
- օտարերկրյա դիմորդների համար ստեղծել մատչելի բնակության պայմաններ,	2015	2020
- խթանել սփյուռքահայերի ներհոսքը Համալսարան,	յուրաքանչյուր տարի	
- ընդլայնել անգլալեզու, ֆրանսալեզու և ռուսալեզու մասնագիտություններով ուսուցման ռեսուրսները,	2015	2020
- Համալսարանում ընդլայնել օտար լեզուներով դասավանդողների քանակը,	2015	2020
- նախապատրաստական դասընթացներ կազմակերպել օտարերկրյա դիմորդների համար:	յուրաքանչյուր տարի	

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

- Ընդունելության պլանավորում՝ պայմանավորված աշխատանքային և կրթության շուկայի պահանջներով (մասնագիտության անվանացանկ և չափաքանակներ):
- Ընդունելություն 2020 թվականին 2015թ. ցուցանիշի նկատմամբ՝ հեռակա, լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրերով 20% և ավելի քանակով:
- Համատեղ իրականացվող կրթական ծրագրերի քանակը Հայաստանի և/կամ արտասահմանյան բուհերի հետ:
- ՀՀ ավագ դպրոցներում գործող ՃՇՀԱՀ հենակետային դասարաններ՝ 2-3:
- Առնվազն 200 արտասահմանցի ուսանող:
- 2015-ին՝ ընդունելության ընդհանուր ծավալը բոլոր կրթական ծրագրերով՝ առնվազն 800:

Ն Պ Ա Տ Ա Կ 2

Բոլոնիայի գործընթացի զարգացումներին համահունչ բարձրորակ, արդիական կրթության ապահովում

Համալսարանի զարգացման առանցքային ուղղությունը շարունակում է մնալ մերձեցումը Եվրոպական բարձագույն կրթական տարածքի (այսուհետև՝ ԵԲԿՏ) սկզբունքներին՝ զարգացնելով Համալսարանի կրթական համակարգն առավել համապատասխան Բոլոնիայի գործընթացի պահանջներին: Այն նախատեսում է որակի ներքին ապահովման համակարգում բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի՝ ENQA-ի (European Association for Quality Assurance in Higher Education) կողմից մշակված որակի ապահովման եվրոպական ստանդարտների և ուղենիշների շարունակական պահպանում, կրեդիտային համակարգի կատարելագործում՝ վերջնարդյունքների արժևորմամբ կրթական ծրագրերի վերակառուցում:

Ուսուցման որակը և կրթական ծրագրերի արդիականությունը Համալսարանի մրցունակության հիմնական երաշխիքն է:

Համալսարանի համար շարունակվում է կարևորվել իր գործունեության արդյունավետության արտաքին գնահատումը, ինչպես մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՄԿՈԱԱԿ), այնպես էլ միջազգային համապատասխան կառույցների կողմից: Այս տեսանկյունից մինչև 2020թ. Համալսարանը նախատեսում է անցնել առնվազն մեկ մասնագիտության կրթական ծրագրի հավատարմագրման տեղական գործընթաց և ինստիտուցիոնալ հավատարմագրման միջազգային գործընթաց:

ԽՆԴԻՐ 2.1: Կրեդիտային համակարգի չափանիշներին համապատասխան կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային բարեփոխումների իրականացում

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014թ. հոկտեմբերի 23-ի որոշմամբ հաստատված նոր՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի դասակարգիչներին համապատասխանող մասնագիտությունների ցանկը՝ իրականացնել մասնագիտությունների խոշորացում,	2015	2015
- ուսումնասիրել գործընկեր համալսարանների կրթական ծրագրերի բովանդակությունն ու կառուցվածքը,	2015	2016
- մշակել մասնագիտությունների կրթական վերջնարդյունքներ՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները և համապատասխան ոլորտներում առաջատար բուհերի փորձը,	2015	2020
- մշակել կրեդիտային համակարգին համապատասխան խոշորացված մասնագիտությունների ուսումնական պլաններ,	2015	մարտ, 2016
- նպաստել եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ուսանողների և շրջանավարտների շարժունությանը՝ դասընթացների կառուցվածքը համապատասխանեցնելով ECTS-ի պահանջներին,	2015	հուլիս, 2016
- ստեղծել ECTS-ի պահանջներին համապատասխան կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշներ,	2015	հուլիս, 2016
- արդիականացնել դասավանդման մեթոդները և կատարելագործել էլեկտրոնային ուսուցման համակարգ,	2015	2020
- մշակել կրթական ծրագրերից բավարարվածության գնահատման չափանիշներ և կազմակերպել պարբերական հարցումներ,	2015	2020
- պարբերաբար վերանայել կրթական ծրագրերը,	2015	2020
- զարգացնել և կատարելագործել շարունակական կրթության հնարավորությունները:	2015	2020

ԽՆԴԻՐ 2.2: Իրականացնել Համալսարանի իստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում տեղական ու միջազգային համապատասխան կառույցներում

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- միջոցներ ձեռնարկել երկու տարին մեկ անգամ ինքնագնահատում իրականացնելու համար,	2015	2020
- ձեռնարկել անհրաժեշտ քայլեր հավատարմագրում անցնելու համար,	2015	2020
- կատարելագործել որակի ներքին ապահովման քաղաքականությունը,	2015	2020
- արտաքին փորձաքննության արդյունքների վերլուծությամբ մշակել կրթական ծրագրերի հետագա բարեփոխման և կրթության որակի շարունակական բարձրացման միջոցառումներ:	2015	2020

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով)

- ՀՀ կառավարության 2014թ. հոկտեմբերի 23-ի որոշմամբ հաստատված նոր՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի դասակարգիչներին համապատասխանող գործող մասնագիտությունների ուսումնական պլաններ և դասընթացների ծրագրեր:
- Մինչև 2020թ. աշխատաշուկայի առկա պահանջներին համապատասխանեցված կրթական վերջնարդյունքներով ձևավորված մասնագիտությունների կրթական ծրագրեր:
- Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար հրատարակված ամենամյա տեղեկագրքեր:
- Համալսարանի շրջանավարտների և կրթական ծրագրերի գործատուների բավարարվածության պարբերական ուսումնասիրություններ և դրանց հաշվառմամբ վերանայված ուսումնական պլաններ և դասընթացների ծրագրեր:
- Համալսարանի ուսանողների բավարարվածության ամենամյա պարտադիր գնահատման արդյունքներ:
- Համալսարանի որակի գնահատման և ապահովման ռիսկային քարտադարանի առկայություն:
- ՄԿՈԱԱԿ-ի սահմանված որակի ապահովման և հավատարմագրման չափանիշներին համապատասխան՝ Համալսարանի ստորաբաժանումների գործունեության և կրթական ծրագրերի ինքնավերլուծություն:
- Համալսարանի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում:

Ն Պ Ա Տ Ա Կ 3

Համալսարանի կադրային քաղաքականության կատարելագործում և գիտամանկավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստման արդյունավետության բարձրացում

Դասախոսի աշխատանքի բնութագիրը մանկավարժական և գիտահետազոտական համալիր գործունեությունն է: Մեծ ուշադրության են արժանի նրա մեթոդաբանական ունակություններն ու կազմակերպչական ձիրքը: Համալսարանն իր հերթին պետք է ապահովի աշխատողների սոցիալական ապահովվածության պատշաճ մակարդակ, զարգացնի սոցիալական բազան, ձևավորի աշխատանքի արդյունավետությունը խթանող վարձատրման համակարգ:

Առանձնահատուկ ուշադրություն է պահանջում երիտասարդ մասնագետների պատրաստումը: Այդ տեսակետից անհրաժեշտ է.

- աշխատանքային բավարար պայմաններ ստեղծել երիտասարդ կադրերի համար,
- առաջնային համարել նրանց սոցիալական վիճակի բարելավումը, որպեսզի կանխվի մասնագետների արտահոսքը,
- պայմաններ ստեղծել ընդունակ, խելացի ուսանողների հետագա ուսուցումն իրականացնելու, այդ թվում՝ արտերկրում, արտագնա ուսումնական պրակտիկաներ կազմակերպելու, ինչպես նաև արտերկրում ուսանած և վերադարձած կադրերին Համալսարանի դասախոսական կազմում ընդգրկելու համար:

Գիտամանկավարժական կադրերի պատրաստման որակի բարելավումը և որակավորման բարձրացումը հանդիսանում է Համալսարանի գիտահետազոտական գործունեության քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը:

- Գիտական և դասախոսական կադրերի պատրաստմամբ զբաղվում են Հետբուհական մասնագիտական կրթության դեպարտամենտը և ֆակուլտետները:
- Համալսարանում ակադեմիական շարժունակությունը ապահովվում է ինչպես միջազգային ծրագրերի (INFINITY-Erasmus Mundus), այնպես՝ էլ համագործակցության պայմանագրերի շրջանակներում: Համալսարանը զարգացնում է ուսումնառողների գիտա-

մանկավարժական կազմի օտար լեզուների խորացված ուսուցման համակարգը, ինչը նպաստում է հետագա ակադեմիական շարժունակությանը: Համալսարանը պարբերաբար հրավիրում է արտասահմանյան գիտնականներին և մանկավարժներին, որոնք հանդես են գալիս դասախոսություններով, անց են կացնում վարպետության դասեր:

ԽՆԴԻՐ 3.1: Իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնաօժանդակ կազմի վերապատրաստում

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- պլանավորել և իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական վերապատրաստման դասընթացներ,	2015	2020
- դասավանդողներին ծանոթացնել ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ դասավանդման հնարավորություններին,	2015	2020
- արտերկրից հրավիրել մասնագետներ՝ փորձի փոխանակման նպատակով,	2015	2020
- դասավանդողներին գործուղել արտերկիր՝ կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար:	2015	2020

ԽՆԴԻՐ 3.2: Երիտասարդ մասնագետներով համալրում

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- կասեցնել պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական կազմի ծերացման առկա միտումը, ստեղծել նախադրյալներ երիտասարդ կադրերի կայուն և որակյալ համալրման ու կատարելագործման համար,	2015	2020
- կատարելագործել երիտասարդ գիտնականների համար հավելավճարային համակարգը,	2015	-

- երիտասարդ գիտնականների համար նախաձեռնել և իրականացնել սոցիալական բնակարանաշինության ծրագրեր: - 2016

ԽՆԴԻՐ 3.3: Գիտամանկավարժական կադրերի պատրաստման համակարգի կատարելագործում դոկտորանտուրայի, ասպիրանտուրայի, հայցորդության համակարգի և մագիստրատուրայի միջոցով

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- խթանել մագիստրատուրայում, ասպիրանտուրայում, հացորդության համակարգում և դոկտորանտուրայում ուսուցման շարունակական կրթությանը,	2015	2020
- նպաստել մագիստրանտների, ասպիրանտների, հայցորդների և դոկտորանտների ակադեմիական շարժունակությունը,	2015	2020
- ապահովել հետադարձ կապ մագիստրանտների, ասպիրանտների, հայցորդների, դոկտորանտների և գործատուների հետ,	2015	2020
- մշակել և իրականացնել երիտասարդ մասնագետներին դասախոսական և գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելուն նպատակաուղղված միջոցառումներ,	2015	2020
- ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի տեղերի բաշխումն իրականացնել՝ հաշվի առնելով Համալսարանի մասնագիտական կարիքները:	յուրաքանչյուր տարի	

ԽՆԴԻՐ 3.4: Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմերի հաստիքների պլանավորում և համալրում

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- մշակել դասախոսների և վարչական աշխատողների մրցակցային սկզբունքով ընտրության կարգ,	2015	2016
- ուսուցման գործընթացը կազմակերպել հոսքային եղանակով,	2015	2016

- մշակել հստակ չափորոշիչներ ՃՇՀԱՀ վարչակազմի և այլ աշխատողների հաստիքների պլանավորման և վերջիններիս ներկայացվող որակական պահանջների ձևավորման համար, 2015 2016
- ուսանող-դասախոս հարաբերակցությունը բերել օպտիմալ չափի՝ հիմք ընդունելով եվրոպական բուհերի օրինակը՝ հաշվի առնելով մասնագիտությունների առանձնահատկությունները: 2015 2018

ԽՆԴԻՐ 3.5: Ստեղծել համապատասխան բարոյահոգեբանական մթնոլորտ, նյութական ապահովման պայմաններ, հսկողական կառուցակարգեր՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար

Միջոցառումներ.

Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ

- մշակել ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի աշխատողներին Հայաստանի Հանրապետության պետական և գերատեսչական պարզների, պետական մրցանակների, պատվավոր կոչումների ներկայացնելու ու Համալսարանի պարզներով պարզատրելու կարգ, 2015 2015
- յուրաքանչյուր աշխատողի համար ապահովել հարմարավետ աշխատանքային պայմաններ, 2015 2020
- նպաստել Համալսարանի շահի նկատմամբ անձնական և կոլեկտիվ պատասխանատվության գիտակցման խորացմանը ու դրանց շարունակական ապահովմանը, 2015 2020
- Համալսարանում ստեղծել կոռուպցիոն ռիսկերի վերլուծության և նվազեցման միջոցառումների մշակման հանձնաժողով՝ ընդգրկելով ներքին և արտաքին շահեկիցներին, 2015 2016
- մշակել և իրականացնել Համալսարանի հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիր, 2015 2015
- կատարել աշխատավարձի շարունակական բարձրացումներ: 2015 2020

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով)

- Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի գիտական աստիճան ունեցողների հաշվեկշիռը՝ առնվազն 52%:
- Ներդնել պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման համակարգ:
- Աշխատակիցների համար իրականացնել աշխատավարձի տարբերակված մոտեցում:
- 2016-ին ՀՀ պաշտոնական միջին աշխատավարձի 135%-ը կազմող պրոֆեսորադասախոսական կազմի միջին աշխատավարձ:
- Ուսանող/ուսումնական գործընթացում ներգրավված անձանց քանակական հարաբերակցություն՝ 5:1:
- Համալսարանում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացում:
- Կոռուպցիայի դեպքերի հետևողական քննարկում:
- Մագիստրատուրա ընդունվածների թիվ, տարեկան:
- Ասպիրանտուրա և հայցորդության համագարգ/դոկտորանտուրա ընդունվածների թիվ, տարեկան:
- Արտասահմանում առնվազն մեկ ակադեմիական շրջան ուսումնառած մագիստրանտների/ասպիրանտների, հայցորդների թիվը, տարեկան:
- Մատուցվող կրթական ծառայությունների որակով մագիստրանտների, ասպիրանտների, հայցորդների և գործատուների բավարարվածության աստիճանը, տոկոս:
- Պետության կողմից ֆինանսավորվող գիտական թեմաներում և արտասահմանյան դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվող գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ասպիրանտուրայի, հացորդության համակարգի և մագիստրատուրայի ուսանողների թիվ, տարեկան:
- Գիտամանկավարժական կազմի երիտասարդ ներկայացուցիչների ներքին խրախուսային հավելավճարների չափը հազ.դրամ, տարեկան:
- Թեկնածուական աստիճան ստացած դասախոսների թիվ:
- Դոկտորական աստիճան ստացած դասախոսների թիվ:
- Համալսարանի գիտամանկավարժական կազմում մինչև 35 տարեկան գիտության թեկնածուների և դոկտորների տոկոսը, տարեկան:
- Համալսարանում դոկտորանտուրա, ասպիրանտուրա, հայցորդության համագարգ, մագիստրատուրա ավարտած և բուհ աշխատանքի ընդունված դասախոսների թիվ, տարեկան:

Ն Պ Ա Տ Ա Կ 4

Ուսումնագիտական լաբորատորիաների և լսարանների արդիականացում, նորերի ստեղծում, նյութատեխնիկական բազայի համալրում, ենթակառուցվածքների զարգացում

ԽՆԴԻԴ 4.1: Հիմնադրել, վերանորոգել և արդիականացնել լաբորատորիաները և լսարանները

Միջոցառումներ.

*Իրականացման
Ժամանակացույց
սկիզբ ավարտ*

- լաբորատորիաները և լսարանները վերանորոգելու, կահավորելու, արդիականացնելու և միջազգային չափանիշներին համապատասխան ժամանակակից տեխնիկայով ապահովելու համար յուրաքանչյուր տարվա բյուջեում նախատեսել 8-10% չափով միջոցներ, 2015 2017
- Համալսարանի սեփական ռեսուրսների պլանաչափ օգտագործմամբ, ինչպես նաև գիտահետազոտական, նախագծային, շինարարական կազմակերպությունների հետ համատեղ ստեղծել 3-5 ուսումնահետազոտական լաբորատորիաներ և կենտրոններ, 2015 2017
- լաբորատոր փորձերի կատարման համար մշակել ուսումնական գրականություն, ստեղծել մոդուլային-հոսքային ուսուցման համար նախատեսված լսարաններ:
յուրաքանչյուր տարի

ԽՆԴԻԴ 4.2: Զարգացնել և ստեղծել դասավանդողների և ուսանողների համար մշակութային, մարզական ու սոցիալական ծրագրերի իրականացմանն ուղղված ենթակառուցվածքներ և համալիրներ

Միջոցառումներ.

*Իրականացման
Ժամանակացույց
սկիզբ ավարտ*

- Համալսարանի տարածքում կառուցել և կահավորել մշակութային միջոցառումների և մարզական պարապմունքների դահլիճներ, 2015 2020

- սոցիալապես անապահով ուսանողների համար սահմանված կարգով կիրառել զեղչեր, օժանդակել Համալսարանում սննդի և մատչելի հանրակացարանային պայմանների ապահովմանը, 2015 2020
- օժանդակել դասախոսներին հանգստի կազմակերպման հարցում: 2015 2020

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

- Եվրոպական միջին պահանջներին համապատասխանեցված նյութատեխնիկական և լաբորատոր բազաներ:
- Մեկ ուսանողին ընկնող օգտակար մակերեսը ոչ պակաս քան 8 քմ:
- Օգտակար ուսումնական մակերեսի աճ հնգամյակի կտրվածքով 10%-ի չափով:
- Համալսարանի բյուջեում սոցիալական ծրագրերի 7%-ի չափով հատկացումներ:
- Կապիտալ շինարարության և վերանորոգման պլանային հատկացումներ հնգամյակում Համալսարանի բյուջեի առնվազն 8%-ի չափով:
- Համալսարանի հանրակացարանային բազայի զարգացում:

ՆՊԱՏԱԿ 5

Համալսարանի գիտական և ստեղծագործական ներուժի օգտագործում հետազոտական, խորհրդատվական, նախագծային աշխատանքներում՝ միտված երկրի տնտեսական, մշակութային և սոցիալական խնդիրների լուծմանը

Համալսարանի զարգացման գերակա ուղղություններից են.

- գիտական և կրթական գործընթացների միասնականությունը, դրանց ուղղվածությունը գիտամանկավարժական կադրերի ու մասնագետների պատրաստմանը,
- գիտության և կրթության ինտեգրումը միջազգային հանրության մեջ,
- գիտության, կրթության և ինովացիոն-արտադրական գործունեության ինտեգրումը:

Գիտահետազոտական աշխատանքների բնագավառում Համալսարանի քաղաքականությունը ուղղված կլինի՝

- գերակա գիտական ուղղությունների ֆինանսական, կադրային, ենթակառուցվածքային, տեղեկատվական աջակցությանը,
- հիմնարար հետազոտությունների և կիրառական մշակումների համադրմանը,
- գիտական-կրթական-ինովացիոն համալիրների զարգացմանը, ինչը ենթադրում է մագիստրանտների և ասպիրանտների պատրաստման համար մրցունակ ծրագրերի ստեղծում, գիտաժողովների պարբերաբար անցկացում, գիտական ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհրդի առկայություն, ասպիրանտների համար նախատեսված կոլեկտիվ օգտագործման կենտրոնի ստեղծում, մտավոր սեփականության օբյեկտների ստեղծում,
- Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնառողների ներգրավվածությանը հետազոտական ծրագրերում,
- գիտահետազոտական ծրագրերի ֆինանսավորման համար հայտարարված հանրապետական և միջազգային մրցույթներում Համալսարանի գիտահետազոտական սեկտորի, ֆակուլտետների, ամբիոնների անձնակազմի մասնակցության ապահովմանը:

ԽՆԴԻՐ 5.1: Ստեղծել նախադրյալներ և նպաստող կառուցակարգեր՝ գիտական հետազոտությունների և փորձարարական ստրուկտուրական մշակումների որակի և արդյունավետության բարձրացման համար

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- ապահովել մասնակցություն՝ մրցույթներում ֆինանսավորում ստանալու նպատակով,	2015	2020
- իրականացնել գերակա ուղղություններով հիմնարար և կիրառական հետազոտությունների զարգացման գործընթացը,	2015	2020
- նախատեսել գիտահետազոտական և խորհրդատվական աշխատանքների ծավալի մեծացում, այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների հաշվին,	2015	2020
- գնահատել կատարվող հետազոտությունների արդյունքներն ըստ միջազգային չափանիշների, արդիականության և կիրառելիության,	2015	2020
- ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի ավելի մեծ ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում, ինչպես նաև ասպիրանտների, հայցորդների և մագիստրանտների ավելի մեծ ներգրավվածությունը գիտահետազոտական ծրագրերում,	2015	2020
- ապահովել մագիստրոսի ծրագրի հետազոտական կողմնորոշումն ու ուղղվածությունը, ավարտական աշխատանքները հնարավորինս շաղկապելով Համալսարանում ընթացող գիտական ծրագրերի և գիտահետազոտական խնդիրների լուծման հետ:	2015	2020

ԽՆԴԻՐ 5.2: Մագիստրոսական, ասպիրանտական կրթության կատարելագործում, մագիստրանտների և ասպիրանտների ակադեմիական շարժունակության բարձրացում

<i>Միջոցառումներ</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- ասպահովել զալցբուրգյան սկզբունքներով կրթական 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացման գործընթացի իրականացում, ինչը ենթադրում է ասպիրանտական և դոկտորանտական ուսուցման կառուցվածքային և գործընթացային փոփոխություններ, կրթական գործընթացի բարեփոխումներ, ուսումնական գործընթացի կազմակերպման կատարելագործում,	2015	2020
- մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերի մշտական կատարելագործում և արդիականացում՝ ECTS կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի ձևաչափով,	2015	2020
- իրականացնել աշխատանքներ՝ նպատակաուղղված մագիստրանտների և ասպիրանտների ակադեմիական շարժունակության բարձրացմանը (ECTS համակարգի ձևաչափով),	2015	2020
- զարգացնել գիտական հետազոտությունները՝ որպես կրթության հիմք,	2015	2020
- ասպիրանտական ուսման խթանման նպատակով ստեղծել ասպիրանտների համար նախատեսված կոլեկտիվ օգտագործման կենտրոն:		2016

ԽՆԴԻՐ 5.3: Մշակել ծրագրեր գիտական արդյունքների առևտրայնացման և/կամ ներդրման համար

<i>Միջոցառումներ</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- իրականացնել գիտահետազոտական ծրագրեր և նախագծեր՝ պետական և մասնավոր	2015	2020

- կազմակերպությունների ներգրավվածությամբ,
- մշակել գործընկերային ծրագրեր՝ Համալսարանի և տնտեսավարող սուբյեկտների միջև, 2015 2020
 - տրամադրել միջոցներ գյուտերի արտոնագրման և գյուտերի հեղինակների խրախուսման համար: 2015 2020

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

- Պետբյուջեից գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման ծավալը, (տարեկան, հազ. դրամ):
- Միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման ծավալը (տարեկան, հազ. դրամ):
- Պայմանագրային/խորհրդատվական աշխատանքների ֆինանսավորման ծավալը (տարեկան, հազ. դրամ):
- Համալսարանի գիտնականների հրապարակումների քանակ (տարեկան):
- Միջազգային վարկանիշավորման համակարգերում ներառված գիտական ամսագրերում Համալսարանի աշխատակիցների/ ուսումնառողների կողմից հրատարակված հոդվածների քանակ (տարեկան):
- Համալսարանի դասախոսների, գիտաշխատողների կողմից հրատարակված գիտական հոդվածների, մենագրությունների, դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների քանակ (տարեկան):
- Ստացված մտավոր սեփականության իրավունքի (արտոնագրերի) քանակ (տարեկան):
- Արտաքին գործընկերների հետ համատեղ Համալսարանի աշխատակիցների մասնագիտական հրատարակությունների քանակ (տարեկան):
- Համալսարանի գիտամանկավարժական կազմի/ուսումնառողների մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովներում (տարեկան):

- Համալսարանում հրատարակվող գիտական պարբերականների քանակը, որոնք ընդգրկված են ՀՀ ԲՈՀ-ի ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրապարակումների ցուցակում:
- Համալսարանի թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհրդում պաշտպանված թեկնածուական/դոկտորական ատենախոսությունների քանակ (տարեկան):
- Համալսարանում պաշտպանված մագիստրոսական ավարտական աշխատանքների քանակ (տարեկան):
- Գիտահետազոտական ծրագրերում ընդգրկված դասախոսների թիվ, տարեկան:
- Համալսարանի ուսումնառողների բոլոր գիտական հրապարակումների քանակ (տարեկան):
- Համալսարանում կազմակերպված ուսանողական, ասպիրանտական գիտաժողովների քանակ (տարեկան):
- Պետական և մասնավոր կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող գիտական նախագծերի և ծրագրերի քանակ:

Ն Պ Ա Տ Ա Կ 6

Միջազգային կապերի կայուն զարգացում՝ ուսումնական և գիտատեխնիկական համագործակցության ուղղություններով, համալսարանի վկայագրի՝ արտերկրում ճանաչման գործընթացի շարունակական ապահովում

ԽՆԴԻԸ 6.1: Ընդլայնել Համալսարանի միջազգային ուսումնական և գիտական համագործակցությունները

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- զարգացնել համագործակցությունը ՀՀ-ում և արտերկրում ճարտարապետական և շինարարական ուղղվածություն ունեցող բուհերի հետ, կազմակերպել համատեղ գիտաժողովներ, ուսանողական նախագծային շաբաթներ, մրցույթներ,	2015	2020
- նպաստել ու խրախուսել պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ակադեմիական շարժունակությանը, արտասահմանյան գործընկերների հետ գիտահետազոտական աշխատանքների կատարմանը:	2015	2020

ԽՆԴԻԸ 6.2: Միջոցներ ձեռնարկել համալսարանի վկայագրի՝ արտերկրում ճանաչման համար

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- ճարտարապետության մասնագիտության օրինակով նախաձեռնել մյուս մասնագիտությունների ուսումնական պլանների, կրթական մոդուլների և որակավորումների համապատասխանեցում միջազգային չափանիշներին,	2016	2020
- միջոցներ ձեռնարկել Համալսարանի մասնագիտությունների՝ միջազգային կազմակերպությունների կողմից գնահատում, ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում անցկացնելու համար:	2015	2016

ԽՆԴԻՐ 6.3: Բոլոնիայի գործընթացին համահունչ մշակել ծրագրեր արտերկրի գործընկեր բուհերի հետ կրկնակի վկայագրի տրամադրման և շարժունակության համար

Միջոցառումներ.

Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ

- հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության և արտերկրի միջև կնքված միջազգային համագործակցության, ինչպես նաև միջբուհական պայմանագրերը՝ գործընկեր բուհերի հետ կնքել համատեղ կրթական ծրագրերի ու կրթական մոդուլների իրականացման պայմանագրեր՝ ESTE կրեդիտների պահպանման և փոխանցելիության սկզբունքով, 2015 2020
- արտերկրի գործընկեր բուհերի հետ կազմակերպել ատենախոսությունների համատեղ ղեկավարում, դրանց պաշտպանություն, շնորհվող գիտական աստիճանների փոխճանաչում: 2015 2018

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով)

- Միջազգային համատեղ գիտակրթական ծրագրերի իրականացման թիվը, այդ ծրագրերում ընդգրկված ուսանողների և դասախոսների թիվը:
- Արտասահմանյան ակտիվ գործընկերային կապերի թիվը՝ ըստ գործող պայմանագրերի:
- Համալսարանի կազմակերպած միջազգային գիտաժողովների, սեմինարների, համատեղ ուսանողական նախագծային շաբաթների թիվը, այդ միջոցառումներին մասնակցություն ունեցած ուսանողների և դասախոսների թիվը:
- Միջազգային կազմակերպություններին Համալսարանի անդամակցության թիվը:

Ն Պ Ա Տ Ա Կ 7

Համալսարանի կառավարման գործընթացում ուսանողների ներգրավման գործուն կառուցակարգերի ներդրում և կատարելագործում

ԽՆԴԻՐ 7.1: Զարգացնել ուսանողների ինքնակառավարման կառուցակարգերը

Միջոցառումներ.

Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ

- | | |
|--|---------------------------|
| <ul style="list-style-type: none"> - զարգացնել ուսանողական խորհրդի հնարավորությունները, | <p>յուրաքանչյուր տարի</p> |
| <ul style="list-style-type: none"> - պատշաճ կերպով կազմակերպել ուսանողների ազատ ժամանցը, | <p>յուրաքանչյուր տարի</p> |
| <ul style="list-style-type: none"> - Համալսարանի ղեկավարության հետ կազմակերպել պարբերական հանդիպումներ, | <p>յուրաքանչյուր տարի</p> |
| <ul style="list-style-type: none"> - ֆինանսավորել ուսանողների կողմից ներկայացվող հեռանկարային ծրագրերը, | <p>յուրաքանչյուր տարի</p> |
| <ul style="list-style-type: none"> - կազմակերպել ինքնակառավարմանը նվիրված դասախոսություններ: | <p>յուրաքանչյուր տարի</p> |

ԽՆԴԻՐ 7.2: Համալսարանի կառավարման մարմիններում ապահովել ուսանողների ներգրավվածությունը

Միջոցառումներ.

Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ

- | | | |
|---|---------------------------|-------------|
| <ul style="list-style-type: none"> - ապահովել Համալսարանի կառավարման, գիտական, ֆակուլտետային խորհուրդներում` առնվազն 25 % ներգրավմամբ, | <p>2015</p> | <p>2020</p> |
| <ul style="list-style-type: none"> - ռեկտորատի կազմում ընդգրկել ուսանողական խորհրդի նախագահին, | <p>2015</p> | <p>2020</p> |
| <ul style="list-style-type: none"> - Հակակոռուպցիոն հանձնաժողովի համադեկավար նշանակել ուսանողական խորհրդի նախագահին, | <p>2015</p> | <p>2020</p> |
| <ul style="list-style-type: none"> - հնարավորություն ընձեռել ուսանողական խորհրդի | <p>յուրաքանչյուր տարի</p> | |

- անդամներին պարբերաբար ներկա գտնվել Համալսարանի կիսամյակային քննություններին,
- ուսանողական խորհրդի ներկայացուցիչների համար ապահովել ազատ մուտք Համալսարանի բոլոր ստորաբաժանումներում, 2015 2020
- Համալսարանում գործող սննդի սպասարկման օբյեկտի վերահսկողություն, 2015 2020
- Համալսարանի տարածքում գրքերի, գրենական պիտույքների վաճառք և պատճենահանման իրականացումը կազմակերպող ընկերության կողմից գնագոյացման ու վերահսկողության իրականացումը վերապահել ուսանողական խորհրդին: 2015 2020

ԽՆԴԻՐ 7.3: Կարիերայի կենտրոնի գործունեության ընդլայնում

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- շինարարության, ճարտարապետության և այլ ոլորտներում աշխատատեղերի հնարավորությունների բացահայտում և դասակարգում,	2015	2020
- հաստատել կապեր և իրականացնել համագործակցություն տեղական և միջազգային կազմակերպությունների հետ,	2015	2020
- իրականացնել անհատական խորհրդատվություն,	2015	2020
- կազմակերպել աշխատանքային տոնավաճառներ, սեմինարներ,	2015	2020
- ուսանողների և շրջանավարտների շրջանում իրականացնել ծանուցման աշխատանքներ թափուր աշխատատեղերի վերաբերյալ,	2015	2020
- շրջանավարտների միջև կապերի խրախուսում և ամրապնդում,	2015	2020
- ծանոթացում աշխատանքի որոնման տեխնիկային:	2015	2020

ԽՆԴԻՐ 7.4: Ուսանողների համար իրականացնել սոցիալական ծրագրեր

Միջոցառումներ.

*Իրականացման
ժամանակացույց
սկիզբ ավարտ*

- ընդլայնել Համալսարանի սոցիալապես առանձնապես անապահով ուսանողների անվճար ճաշարանից օգտվելու ծրագիրը, յուրաքանչյուր տարի
- կազմակերպել օտար լեզուների և համակարգչային արտաժամյա անվճար պարապմունքներ,
- կազմակերպել ուսանողների առողջ ապրելակերպին ուղղված միջոցառումներ, յուրաքանչյուր տարի
- կազմակերպել և աջակցել ուսանողների կողմից ձևավորվող տարբեր մարզամշակութային խմբակներին: յուրաքանչյուր տարի

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

- Սովորողների հանդեպ Համալսարանի պայմանագրային պարտավորությունների կատարման վիճակը:
- Սովորողների կրթական ծառայությունների մատուցման վիճակը:
- Սովորողների իրավունքների պաշտպանության վիճակը և իրավունքների իրացման հնարավորությունները:
- Սովորողների ժամանցի, հանգստի և առողջության ապահովման ու ֆիզիկական զարգացման վիճակը:
- Գործատուների կողմից առաջարկվող աշխատատեղերի քանակը (Համալսարանի սովորողների համար):

Ն Պ Ա Տ Ա Կ 8

Համալսարանի գործունեության արդյունքների հաշվետվողականության ապահովում

ԽՆԴԻՐ 8.1: Ապահովել Համալսարանի գործունեության թափանցիկությունը

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- ապահովել հասարակության տեղեկատվությունը ուսումնական գործընթացի վերաբերյալ,	2015	2020
- Համալսարանի գործունեության վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն տեղադրել Համալսարանի կայքում և սոցիալական ցանցերում,	2015	2020
- մամուլի, կայքի, սոցիալական այլ կայքերի, հեռուստատեսության միջոցով հասարակությանը տեղեկացնել Համալսարանում իրականացվող միջոցառումների մասին,	2015	2020
- Համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնել հոգաբարձուների և գիտական խորհուրդներում,	2015	2020
- Համալսարանի գործունեությանն առնչվող կարևոր հարցերի վերաբերյալ կազմակերպել քննարկումներ ստորաբաժանումների մասնակցությամբ:	2015	2020

ԽՆԴԻՐ 8.2: Երկխոսություն ապահովել ներքին և արտաքին շահեկիցների հետ

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- ներքին և արտաքին շահեկիցների շրջանում իրականացնել պարբերական սոցիոլոգիական հարցումներ,	2015	2020
- ավարտական աշխատանքների պաշտպանության հանձնաժողովներում ներգրավել արտաքին շահեկիցների,	2015	2020

- ապահովել մասնագիտական քննարկումներ ներքին և արտաքին շահեկիցների հետ, 2015 2020
- Համալսարանի կառավարման մարմիններում, մասնավորապես՝ Համալսարանի հոգաբարձուների և գիտական խորհուրդներում ներգրավել ներքին և արտաքին շահեկիցների, 2015 2020
- Ֆակուլտետային խորհուրդներում ներգրավել ներքին և արտաքին շահեկիցների: 2015 2020

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

- Սոցիոլոգիական հարցումների միջոցով հասարակության և շահեկիցների տեղեկացվածության մակարդակի աստիճանը:
- Հասարակական լրատվական միջոցների մշտադիտարկում (մոնիթորինգ):
- Համալսարանի կայքում «Մամուլը մեր մասին» էջի ստեղծում:
- Համալսարանին առնչվող մամուլի անդրադարձների թիվը:

Ն Պ Ա Տ Ա Կ 9

Ֆինանսատնտեսական գործունեության կայունություն

ԽՆԴԻՐ 9.1: Համալսարանի ֆինանսական միջոցների պլանավորումն իրականացնել Համալսարանի գործունեության հիմնական նպատակներին և խնդիրներին համահունչ

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- իրականացնել ֆինանսական միջոցների՝ մուտքերի և ելքերի շարունակական պլանավորում,	2015	2020
- ապահովել բյուջեում ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և թափանցիկ բաշխում՝ համաձայն Համալսարանի զագացման նպատակների,	2015	2020
- ձեռնարկել միջոցներ բյուջետային ֆինանսավորման ծավալների աճ ապահովելու համար,	2015	2020
- մշակել ուսման վարձերի ձևավորման քաղաքականություն՝ ապահովելով արտաբյուջետային կայուն հոսքեր,	2015	2020
- ձեռնարկել միջոցներ կրթական, գիտական, նախագծային, խորհրդատվական վճարովի ծառայություններից մուտքերի ընդհանուր ծավալը բյուջեում մեծացնելու համար:	2015	2020

ԽՆԴԻՐ 9.2: Ապահովել ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- կատարելագործել Համալսարանի ֆինանսական կառավարումը՝ մեծացնելով թափանցիկությունը,	2015	2020
- իրականացնել պլանային և արտահերթ գույքագրումներ,	2015	2020

- իրականացնել նյութատեխնիկական ռեսուրսների գնման պլանավորում և օգտագործման արդյունավետության գնահատում, 2015 2020
- մշակել ռեսուրսախնայողական ծրագրեր, 2015 2020
- մշակել և իրականացնել հաստիքների օպտիմալացման ծրագրեր՝ աշխատավարձի և որակի շարունակական բարձրացմանը համընթաց: 2015 2020

ԽՆԴԻՐ 9.3: Համալսարանի կանոնադրությանը համապատասխան՝ իրականացնել ծրագրեր՝ համալսարան այլ աղբյուրներից ֆինանսական ներհոսք ապահովելու համար

<i>Միջոցառումներ.</i>	<i>Իրականացման ժամանակացույց սկիզբ ավարտ</i>	
- մասնակցել տեղական և միջազգային մրցույթներին,	2015	2020
- մասնակցել դրամաշնորհային գիտական ծրագրերին,	2015	2020
- միջազգային գործընկերների հետ մասնակցել TEMPUS և նմանատիպ այլ ծրագրերի,	2015	2020
- միջազգային և տեղական գործընկերների հետ իրականացնել նախագծային, խորհրդատվական, տեխնիկական հսկողության ծրագրեր,	2015	2020
- կազմակերպել մասնագետների լրացուցիչ կրթության վճարովի դասընթացներ,	2015	2020
- միջազգային ծրագրերում ներգրավել Համալսարանի աշխատակիցներին, որը կնպաստի նրանց աշխատավարձի բարձրացմանը:	2015	2020

**Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
(հինգ տարվա կտրվածքով)**

- Արտաբյուջետային մուտքերի աճը բյուջետային մուտքերի նկատմամբ յուրաքանչյուր տարի ավելացնել՝ առնվազն 5%:
- 2020 թվականին ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի միջին ամսական աշխատավարձի աճ 2015 թվականի նկատմամբ՝ առնվազն 15%-ի չափով:
- Ուսանողներին հատկացվող ֆինանսական օժանդակության (ներառյալ ուսման վարձերի զեղչերը) նվազագույնը սահմանել վճարովի սովորող համակազմի առնվազն 10%-ի չափով: